

658

S-38

1910

115 JAN 2010

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

35

1851
S

ԱՆՀՐԱԺԵՇՏ

ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ ԲԱՂԱԲԻ ՀԱՄԱՐ


(ՆՈՐ ԿՅՄԹԻՆԱՑԻԱ)

Երթուղի ԼԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ

Արտատպած

„Эриванскія Объявленія“ [Ժերմիկից:

(860 1909 թիվ №№ 53, 54, 55, 56, 59, 63 և 64).



Ե Ր Ե Ւ Ա Ն

Կարան Է. ՏԷՐ-ԳԵԼԳԵԱՆԻ

1910 թ.

25.500

5-38

Է. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

630

133-ՏԷ

ԱՆՀՐԱԺԵՇՏ

ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ ԲԱՂԱԲԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

Արդարացի
„Эриванскія Объявленія“ թերթիկից:



Ե Ր Ե Ւ Ա Ն

Տպարան Է. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
1910 թ.

10857

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՑ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳՐՈՐԳ ՄԱՍՐ

I.

Մենք բանի որ բարձրացրել ենք, բաղադրիս համար անհրաժեշտ ձեռնարկութեան հարցը՝ մեզ ասում են.—այդ բոլորը շատ լաւ է, շատ գեղեցիկ է, շատ ցանկալի է, բայց...

Գլուխ գալու բան չէ:

— Ինչո՞ւ:

— Ընէնց, գլուխ գալու բան չէ:

Մէկն ասում է, թէ մեր քաղաքին ով կտայ միլիոնը, միւսն ասում է թէ, քաղաքին անելանելի պարտքերի տակ են ուզում գցել*), երրորդն ասում է՝ մեզանում ոչինչ գլուխ չի գալ, չորրորդը՝ թէ ինչի՞ Պատերազմում, Մոսկովում և միւս քաղաքներում այդ ամենը չկայ, ուր տասնեակ, հարիւրաւոր միլիոններ են տարեկան ծախսում և մեր քոսոս Երեւանում պիտի լինի այդ ամենը. հինգերորդը՝ թէ այդպիսի դաժնադրանքի գլուխ ո՞վ ունի, վեցերորդն—Ու պրավան—բթի տակ ծիծաղում է և Դումայի նիստերում հեղինական պարներ է ուղարկում մեր հասցէին... եօթնե-

*) Պարտքի տակ մենք չենք ուզում գցել... Մեր նպատակն է ոչ միայն պարտքից ազատել, այլ քաղաքի համար առատ եկամուտների աղբիւր ստեղծել:

ըրբդն ասում է՝ այդ բոլորը ուտօպիա է, ֆանտազիա է, խիմերա է...

Բայց փաստը նա է, չկայ մէկը, որ գտնի մեր առաջարկութիւնը անցանկալի: Բոլորն էլ գտնում են միայն անիրագործելի:

Ինչո՞ւ:

Որովհետեւ չեն ուզում լուրջ դատողութեան տակ գցել մեր առաջարկութիւնը:

Մեր զեկավարներից մի քանիսը ուրիշ մեխի են խրում. — սրանք չեն ուզում իրենց գործը բարդեցնել, իրենց որոշ նպատակները թողնել...

Բայց ի՞նչ էր մեր առաջարկութիւնը և ի՞նչն է ուտօպիա, ֆանտազիա, խիմերա:

Փորձենք պարզել այսպէս խօսողների ամբողջ չկամութիւնը, անհետեւութիւնը, դեհիլութիւնը:

Մենք առաջարկում ենք. քաղաքը թող թէկուզ մէկ միլիօն բուր. չափ փոխառութիւն անի. այդ գումարից նախ՝ 100,000 բուր. իր ունեցած պարտքը հատուցանի և ապա՝ մնացածով կառուցանի:—

1. Ջրանցք.

2. Կոյուղի. (канализация).

3. Տրամվայ էլէքտրական.

4. Տէլեֆօն.

5. Էլէքտրական մի մեծ ստանցիա Ջանգլի վրա 3000 ձիու ուժի զօրեղութեամբ:

Այս ստանցիայից պէտք է ստացուի ոյժ, լոյս, տաքութիւն և հովութիւն:

Առաջին երկուսը խիմերա չեն, որովհետեւ առաջինն արդէն ստիպողական հարց է դարձել Դերկայումս, իսկ երկրորդը նոյնքան անհրաժեշտ է քաղաքի համար, որքան և առաջինը: Կոյուղին, այսպէս թէ այնպէս, պարտքով թէ

անպարտք, վաղ թէ ուշ՝ պէտք է շինւի:— սա մի անդուպելի պահանջ է. ուղենք-չուղենք՝ պէտք է շինւի:

Սա խիմերա չէ:

Երրորդը—տրամվայը, արդէն գոյութիւն ունի, բայց ոչ էլէքտրական ոյժով. իսկ էլէքտրական տրամվայ, հեռու չը-գնանք հէնց Թիֆլիզում կայ:

Սա էլ խիմերա չէ:

Չորրորդը—տէլեֆօնը նոյնպէս խիմերա չէ, որովհետեւ նոյն իսկ ռուսաստանի համարեա փոքր ի շատ աչքի ընկնող ամեն մի քաղաք ունի:

Մնում է հարցը հինգերորդին—էլէքտրական ստանցի-ային, թէ որքան ցանկալի է դա և որքան իրագործելի:

Ահա այստեղ մենք պէտք է կանգ առնենք. որովհետեւ մեր առաջարկութիւնը եթէ ուտօպիա է, ֆանտազիա է, խիմերա է—սա է, որ կարծես հուշտ է անում ամենքին, անհաւատալի է թւում շատերին և ձեռնառու չէ դառնում մի քանիսներին:

II.

Եթէ լինէր որանից մի քանի տարի առաջ՝ մենք էլ գուցէ կասկածէինք էլէքտրականութեան մասին. թէ և մեր աչքի առաջ շատ օրինակներ ու գրականութիւն ունէինք:

Կկասկածէինք, ոչ թէ նրա իրականացման համար, այլ նրա գործադրութեան համար:

Բայց այսօր Կիրակոսեանի էլէքտրականութիւնը բաց ա-րեց մեր աչքերը, ապացուցեց, որ այդ գործը ոչ թէ խի-մերա է, այլ ամենակարեւոր, ամենացանկալի կենսական պահանջ է լինելու բնակչութեան համար և եկամտի մի նոր և շատ մեծ աղբիւր՝ քաղաքի համար:

Եւ իրօք. այսօր մեղանում կիլօվատ-ժամը 20 կող. արժէ-քով՝ խլիւլում է քաղաքիս բնակչութիւնից, և խլիւլում է

մինչ այն աստիճանի, որ մեր կլուրի պէս մի հիմնաբերութիւն (որը տարեկան կարող էր տալ մինչև 3000 ռ. Կիրակոսեան ընկերութեանը), այլ ևս չէ ստանում լոյսի էնէրգիա. աւելի պարզ ասենք՝ չեն տալիս նրան այդ էնէրգիան. — ընկերութեանն աւելի ձեռնադրու է ծախել մասնաւոր մարդկանց...

Իսկ թէ ի՞նչ լոյս է տալիս այդ ընկերութիւնը—մենք այդ գիտենք:

Գիտենք նաև, որ նրա ստանցիայի գործողութիւնը շատ քիչ է, իսկ պահանջը մեծ և համեմատական էնէրգիայի սակաւութեան պատճառաւ է, որ եղած լոյսը, կամ հանգչում է, կամ քշանում, կամ բարձրանում է կամ ցածանում և շատ անգամ ազատ, կարմիր լոյսով մեզ քուսացնում:

Չնայելով այս բոլորին՝ այնուամենայնիւ նոր պահանջողների թիւը աստիճանաբար բարձրանում է և բարձրանում, բայց բոլորն էլ մնում են ձեռնունայն, բոլորն էլ մերժում են ստանում ընկերութիւնից:

Պէտք է իմանալ նոյնպէս, որ Կիրակոսեանի կիլովատ-ժամի հաշուով լուսաւորութիւնը թանգ է մեր նաւթային լուսաւորութիւնից երեք անգամ. օրինակ՝ եթէ մի տուն ծախսում է իր սովորական լուսաւորութեան համար, դիցուք, 40 ռ. այդ նոյն տանը պէտք է ծախսի երեք անգամ աւելի=120 ռ.

Հիմայ առաջ է գալիս մի հարց.

Եթէ կիլովատ-ժամը արժենայ 8 կ. և այդպիսով էլէքտրական լուսաւորութիւնը հաւասարել նաւթային լուսաւորութեան, չեն փոխի արդեօք մեր քաղաքացիք իրենց նաւթը էլէքտրականութեան:

Այս հարցի առաջ անշուշտ շատերը կ'մզմզան: Իսկոյն չեն համաձայնի և կ'իսատ-պուտ, անորոշ կարծիքներ կ'այայտեն:

Այն ժամանակ մենք կտանք մի ուրիշ հարց.

Իսկ եթէ գտնուի մի ստանցիա, որը բնակչութեանս տայ ոչ թէ 8 կոպէկով կիլովատ-ժամը, այլ 6 կոպէկով. այդինքն նաւթային լուսաւորութեան համար բնակչութեանս գործ դրած գումարից պակաս արժէքով.—այն ժամանակն ինչպէս:

Այն ժամանակ մեր չկամները անշուշտ աչքերը կ'ընեն, ամեն մէկը մի մի հարցական կ'առնան և ձեռքի մի հեղնական շարժումով կ'սպասեն ու միանգամայն ֆանտազիա, ուսուպիա, խիմերա կ'համարեն:

Բայց, պարոններ, մենք դրան էլ բաւական չենք. մենք ասում ենք, որ քաղաքի ստանցիան միջոց կ'ունենայ մեզ տալու կիլովատ-ժամը ոչ միայն 8, ոչ միայն 6, այլ ուղղակի 4 կոպէկով. իսկ եթէ ստանցիայի ամբողջ արտադրելիք էնէրգիան գործադրութեան մէջ մտնի՝ դեռ մինչև անգամ 2 կոպէկով: (Բացադրութիւնը յետոյ):

Բայց ընդունենք միայն 4 կոպէկը, իբրև մի ամենամեծ կամ նորմալ թիւ:

Հիմայ մի ուրիշ հարց.

Ո՞ր աղբատը չի օգտւիլ էլէքտրականութիւնից իր լուսաւորութեան համար, քանի որ նա ծախսում էր տարեկան, դիցուք, 10 ռ., իսկ այսուհետև ծախսելու էր ուղիղ նրա կէսը—5 ռ.:

Կնշանակէ՝ եթէ լինի մի այնպիսի առատ էնէրգիայով էլէքտրական ստանցիա, որ թողնի լոյսի էնէրգիայի կիլովատ-ժամը 4 կոպէկով, հաստատապէս կարելի է ասել, որ ամբողջ քաղաքը, թէ հարուստ, թէ միջին կարողութեան տէր, թէ չքաւոր և թէ ամենաղաւուն աղքատ, անմիջապէս կ'օգտւեն այդ ստանցիայից առանց այլապիտութեան և նոյն իսկ երախտապարտ չնորհակալութեամբ:

Եւ լուսաւորութեան գործը հաստատապէս կարելի կլինի ապահոված համարել:

III.

Քացի այն հաւանական թւերից, որ բերել էինք „Անհրաժեշտ ձեռնարկութեան“ առաջին մասում՝ պարզենք մեր ասածը էլէքտրականութեան վերաբերութեամբ նաեւ ուրիշ հաւանական թուերով:

Եթէ քաղաքս ունի 4500 բնակութիւն կամ տուն (դուրս գցենք 500-ը, իբրեւ աղքատների տներ, ուր միանգամայն կարող են նաւթ չբանեցնել) այնուամենայնիւ պէտք է ընդունենք, որ 4000 բնակութիւնը պիտի օգտւէ էլէքտրականութիւնից:

Եթէ հիմայ ընդունենք, որ ամեն մի տուն կամ բնակարան միջին թւով ծախսէ տարեկան 10 ռուբլու էներգիա լուսաւորութեան համար՝ արդէն գումարը հասնում է 40,000 ռ. տարեկան եկամուտի:

Կամ.

Եթէ ընդունենք, որ 4000 բնակարաններից 1000-ը բանեցնի 18-ական ռուբլու տարեկան էներգիա լուսաւորութեան համար, 1000-ը—12 ռ., 1000-ը—6 ռ. և վերջին 1000-ը—4 ռ., դարձեալ գոյանում է 40,000 ռ. տարեկան եկամուտ:

Այս մէկ:

Երկրորդ.

Քաղաքիս բոլոր փողոցների անհամեմատ մեծ առատութեամբ լուսաւորութիւնը, քան այժմս է, ընդունենք միայն 15000 ռ.

Մի այգբան էլ թող գործադրի քաղաքիս տրամվայների համար.

Գործարաններից ստանալիք գումարը մենք մօտաւորապէս հաշիւ ենք մեր նախկին յօդածներում միայն 6000 ռ.

Որ միասին կանէ 36,000 ռ. իսկ բնակչութեան լուսաւորութեան հետ միասին՝ 76,000 ռուբ.

Սրանք այնպիսի թւեր են, որոնք ոչ մի կասկած չեն կարող յարուցանել:

Դառնանք ստանցիայի երրորդ և ամենաձեռնասու, ամենաօգտակար կետին. այսինքն եթէ վառելափայտն էլ փոխարինել էլէքտրականութեան, որն ի հարկէ, իսկոյն չի լինի, այլ ժամանակների ընթացքում:

Քաղաքս մտնում է մօտ 2500 վազօն վառելափայտ միայն երկաթուղիով, բացի գիւղերից և Դարաշէնգալի կողմերից ստացածներից, ինչպէս և ահագին քանակութեամբ ածուխ:

Մի ըոպէ ընդունենք, որ քաղաքումս գործադրում է վառելափայտը ոչ այնքան, որքան յիշեցինք, այլ միայն 5000 տաճէն:

Սրա արժէքն է 200,000 ռ.

Անկարելի է, որ այս 200,000 ռ. վառելափայտի փողաւորներից գոնէ մի քանորդը չփոխանակէ փայտին էլէքտրականութիւնը և չստանայ ոչ ժ սենեակները տաքացնելու համար, կերակուրները եփելու և էլէքտրական վէնտիլիացիաներ ու հովհարներ ունենալու համար: Այս կանէ 50,000 ռ. տարեկան:

Ամեն մի բնակարան (հաշիւ առնենք միայն 2500) կը բանեցնի տարեկան 8 ռ. ածուխ՝ հեշտահոնների ու թօների համար և բէնզին կամ սպիրտ, սուրճի, կաթի համար և այլն: Սրանք փոխարինելով էլէքտրականութեան՝ տարեկան մուտք կստացւի 20,000 ռ.

Ո՞ր քաղաքացին, բնակարան վարձողը կամ տան տէրը չի շտապիլ օգտուելու այդ մեծ յարմարութիւնից և համեմատական աժանութիւնից:

Եւ այդ երկու դէպքումն էլ կստացւի տարեկան 70,000

ը. Հափ մի գումար:
Իսկ բոլորը միասին կանէ 146,000 ռ.

IV.

Եթէ Կիրակոսեանը իր կապած ձեռքերով ու ոտքերով կարող է ունենալ մի ոտանցիա մօտ 180 ձիու ոյժի զորեղութեամբ, ինչի չպէտք է կարողանայ մի քաղաքը իր բաց ձեռքերով ու ոտքերով, ունենալ երեք և աւելի հազար ձիու զորեղութեամբ մի էլեքտրական ստանցիա:

Սա ուտօպիա, ֆանտազիա, խիմերա չէ:

Ապա ի՞նչն է խիմերան: Ինչո՞ւմն է կայանում ֆանտազիան:

Երեւի նրանում, գուցէ կարծում են, որ մեր քաղաքացիք այնուամենայնիւ կարող են շօգուել մեր էլեքտրականութիւնից:

Այդպիսի կածիքն արդէն ոչ միայն դարձանալի կլինի, այլ և ծիծաղելի:

Եւ այդ ծաղրածունների դերը վերցնում են իրենց վրայ մեր չկամները, կամ ընդհանուր հասերով բոլորովին հետաքրքիր չեղողները և կամ այս կամ այն հաշիւ ունեցողները:

Հիմա մենք դիմում ենք հէնց այդ պարտններին և ասում:

Դուք, պարտներ, դաժման բազորում գիտե՞ք լիտրը 24 կոպէկով և միշտ անհամ չէ դուրս գալիս. իսկ Պ-ն յանձն է առնում ձեզ առաւել լուս, աւելի քաղցրահամ դաժմա 12, կամ նոյն իսկ 18 կոպէկով:

— 2Էք առնի նրանից:

Եթէ բոլոր խանութներում 2 մանէթով է ծախւում թէյի ֆունտը, իսկ X-ի խանութում ծախւում է նոյն թէյը 1 ռ. կամ 1-50-ով:

— 2Էք առնի X-ից:

Եթէ բոլոր խանութներում ծախւում է շաքարի փութը 6-ով, իսկ Բ-ի խանութում նոյն շաքարը կարելի է գնել 3-4-ով:

— 2Էք առնի Բ-ից:

Անկասկած, որտեղ աւելի աժան է և մէկին մէկ պակաս, — այնտեղից էլ կառնէք:

Սա արդէն խիմէրա չէ, ֆանտազիա չէ:

Սրա դէմ մի՞ճեյ չի կարելի:

Եթէ քո վրայ տանդ լուսաւարութիւնը արժենում է, օրինակ, տարեկան 40 լուր. իսկ քեզ քաղաքի ստանցիան կայ, դիցուք, 30 լուր լիով:

— 2Էս ուղենայ արգեօք:

Մի՞թէ կասես՝ թող 40 լինի, բայց նաւթ լինի վառածս. կամ մի՞թէ կասես՝ ես ուրիշին 40 կտամ, բայց քաղաքին 30 էլ չեմ տալ:

Եթէ դու 90 ռ. տարեկան ցախի, ածուխի և այլն փող ես տալիս, իսկ քաղաքը քեզ կասի՝ տուր ինձ այդ գումարը և ես քեզ ամբողջ տարի կտամ՝ ձմեռները սենեակներիդ համար տաքութիւն, որքան որ ուզես, կերակրներդ եփելու տաքութիւն՝ որքան կամենաս, հեշտաեղ եռացնելու, սուրճդ եփելու, կաթդ և ութօդ տաքացնելու՝ որքան անգամ որ կուզես և բացի այս ամենը, քեզ կտամ նաև ոյժ՝ բոլոր սննեակներումդ վնասիլիացիա բանեցնելու համար, կամ ոյժ՝ սննեակներդ ամառները հով պահելու համար:

— 2Էս համաձայնի արգեօք: Մի՞թէ կասես, ոչ. ես այդ 90 ռ. կտամ միայն ցախի և ածուխի. վնասիլիացիան և հովութիւնը ինձ պէտք չեն. ամառները ես ուզում եմ անպատճառ քրտնած լինել, խաչել չոգից և մոծակներից ու ճանճերից կծած լինել:

Ախ, եթէ իրօք այդպէս կասեն մեր քաղաքացիք, իրենց սեփական իւրն ու շառը չեն կամենալ հասկանալ, այն

ժամանակ մենք փառ: Այն ժամանակ մենք վայր կգնենք մեր գրիչը և կգնանք հանգիստ գերեզմանում կպառկենք:

Աւելի լաւ է այսպիսի հանգամանքներում գերեզմանը, քան ապրել այնպիսի հասարակութեան մէջ, որը կղեկավարէի սոյն օրինակ դատողութիւններով:

Բայց մենք չենք հաւատում դրան:

Այդպիսի հասարակութիւն չէ մեր հասարակութիւնը:

Այդպիսի հասարակութիւն, այնքան կուրացած, որ փաշկարայ իր օգուտն էլ չէ հասկանում՝ հաստատապէս կարող ենք ասել, որ Զուլուաների երկրումն էլ չի գտնուի: Իսկ երեւանում—ես առաւել:

Վերջապէս այդ բոլոր հակառակ մտքերի մարողջ ցնդաբանութիւնը հերքում է Կիրակոսեանի լուսաւորութեամբ և նրա էլէքտրական երեք անգամ թանգ և խաւար լոյսի պահանջով, մինչև անգամ ի լիւրելով:

V.

Ճիմայ անց կացնենք մի զուգահեռական գիծ Կիրակոսեանի ունեցած և քաղաքիս ունենալիք ստանցիաների մէջ. ցոյց տանք առաջինի անյարմարութիւնները և երկրորդի յարմարութիւններն ու առաւելութիւնները. խօսենք նաեւ թէ ինչի՞նչ Կիրակոսեանը չէ կարող իջնցնել իր էնէրգիայի գինը և նոյն իսկ, գուցէ և ձեռնտու չէ նրա համար թէկուզ ամբողջ գործը ներկայ գնելով և ինչի՞նչ պիտի շահաւէտ լինի քաղաքի համար նոյն էնէրգիայի գինը այն աստիճան պակասեցրած գնելով, որ մենք մասնացոյց արենք:

Դրա պատասխանը շատ պարզ է:

Նախ և առաջ պէտք է իմանալ, գիտութեան մէջ ընդունւած հետեւեալ օրէնքը.

„Գիւղըալիք էլէքտրական ստանցիայի արժէքը ուղղակի

կախումն ունի նրա գործողութիւնից. որքան աւելի է գործողութիւնը, նոյնքան պակաս է արժէքը. որքան պակաս է գործողութիւնը, նոյնքան աւելի է արժէքը“:

Օրինակ. եթէ Կիրակոսեանի ստանցիան իր մօտ 180 ձիու ոյժով, որ կարող է տալ 135 կիլովատ-ժամ, արժէ, զիցուր, 40,000 ռ. և նրա տարեկան ծախքը հասնում է մօտ 15,000 ռ. դրա հակառակ՝ քաղաքի մեր առաջարկած ստանցիան՝ 3000 ձիու ոյժով՝ կամ 2250 կիլովատ-ժամով կարժենայ 300,000 ռ.*) սրա տարեկան ծախքը կլինի ոչ աւելի քան 25,000 ռուբ.:

Նոյնն էլ պէտք է ասել և նրանց արտադրած եկամուտները մասին:

Անցնենք գլխաւոր հարցին և պատասխաններին:

1). Կիրակոսեանն օգտւում է Զանգաւի ոյժից ամենա-սահմանափակ միջոցներով և այն՝ ուրիշների իրաւունքներով, այնինչ քաղաքիս համար բաց են բոլոր գոնելը և ոչ որից ու ոչ մի հանգամանքից կախում չի ունենայ նա:

2). Կիրակոսեանի ստանցիան բանում է միայն գիշերները միջին թւով, ինչպէս ընդունւած է գիտութեան մէջ, 9 ժամ, որի կէս ոյժը, գուցէ և աւելին, գործադրւում է քաղաքի փողոցների լուսաւորութեան համար կիլովատ-ժամը 5 կոպէկով, իսկ միւս կէսը վաճառւում է քաղաքացիներին 20 կոպ. այնինչ քաղաքի ստանցիան կարող է գործադրել իր ոյժը և գիշեր և ցերեկ. գիշերները լուսաւորութեան համար և ցերեկները՝ տաքութեան կամ հովութեան՝ արամվայների և գործարանների համար և այլն և այլն:

3). Մասնաւոր գործարանները չեն կարող օգտւել Կիրակոսեանի ստանցիայից, որովհետեւ 20 կ. կիլովատ-ժամը

*) Մենք ի նկատի ունենք էլէքտրական ստանցիայի ամբողջ գործն ու կազմակերպութիւնը: Գրեթէ քաղաքիս առաջին մասում հաշւել էինք 150,000 ռուբ. միայն գուտ ստանցիայի և մեքանիկների արժէքը:

ուղղակի ձեռնտու չէ նրանց համար. այնինչ կօդաւեն նրանք անշուշտ քաղաքի ստանցիայից, քանի որ սու կը-
թողնի էնէրգիան ամենաշատ 4 կ., որ անհամեմատ աւելի
աժան կլինի գործարանների համար, քան թէ արժենում է
հիմայ՝ իրենց ունեցած շարժիչ մեքենաներով:

4). Կիրակոսեանը կարող է հասցնել իր ստանցիայի գորե-
դութիւնը առ առաւելն 250 ձիու ոյժի և 6000 ձիու ոյժի
քաղաքը, եթէ պակսի 3000 ձիու ոյժն էլ, կարող է մի
այդպիսին էլ չինել եղած ստանցիայից ցած:

5). Կիրակոսեանը պէտք է վճարի էջմիածնի վանքին,
ինչպէս և Մ. Սմբատեանին ամեն տարի հազարներ՝ նրանց
տեղերի և իրաւունքների համար, այնինչ քաղաքը ոչ որի
և ոչինչ չի վճարի:

6). Քսան երկու տարուց յետոյ Կիրակոսեանի ամբողջ
ձեռնարկութիւնն անցնում է էջմիածնի վանքին, այնինչ
քաղաքի ստանցիան, իր ամբողջ ծախքը և պարտքը հա-
նելուց յետոյ՝ մնում է իրեն:

7). Մեծ ծախս է կանում նրա աղմինիստրացիան, կան-
տօրան, աշխատաւոր ձեռքերը, դրամագլխի տոկոսները ի
նկատի առնելով նրա փոքրութիւնը, այնինչ քաղաքի հա-
մար, արժենում է այդ համեմատաբար շատ չնչին գու-
մար, համաձայն իր ստանցիայի մեծութեան:

8). Կիրակոսեանի ստանցիայի ոյժը չէ բաւականացնում
նոյն իսկ ամենասահմանափակ լուսաւորութեան համար,
այնինչ քաղաքիս արտադրած ոյժը կհեղեղի ամբողջ քա-
ղաքը յոյսով, ոյժով և տաքութիւնով և միևնոյն ժամանակ
կարող կլինի սրամիայներ բանեցնել թէկուզ Քանաքեռից
մինչև Վաղարշապատ, նորրից մինչև Գօնդն ու Գամուրբու-
լաղը, գերեզմանատներն ու վակալը, ինչպէս և կարող կլի-
նի ամառները ջուր մատակարարել մօտակայ անջրդի հո-
ղերին, ինչպէս ասել ենք մեր նախկին յօդածնիսում:

9). Կիրակոսեանը ծախսում է իր էնէրգիան կիրովատ-
ժամի հաշուով, իսկ քաղաքը կարող է առ նոյն էնէրգիան
թէկուզ լամպաների, սենեակների, փէշերի, պլիտաների
հաշուով. օրինակ՝ եթէ մէկ փէշը, որ երկու սենեակ է տա-
քացնում, ծախսում է տարեկան 30 ռ. և պլիտան 40 ռ.
փայտի համար, քաղաքը կարող է նոյն փողը վերցնել և
առաւելեան տարութիւնը՝ աւելացնելով նաև վնասի-
լիացիաները անվարձ:

10). Կիրակոսեանի ստանցիայի էնէրգիան—180 ձիու
ոյժով կամ 135 կիրովատ-ժամով—ամեն մի տան վրայ
գալիս է ^{1 2 3} 1. Կիրովատ-ժամ օր ու գիշերւայ մէջ, այնինչ
քաղաքի ստանցիայի էնէրգիան ամեն մի տան վրայ կգայ
մօտ 12-15 կիրովատ-ժամ: Սա այնպիսի մի անսպառ էնէր-
գիա է ամեն մի տան համար, որ ոչ մի հնարաւորութիւն
չկայ ամբողջապէս բանեցնելու, եթէ չլինեն տրամվայները,
քաղաքի լուսաւորութիւնը, գործարանները և այլն:

11). Կիրակոսեանն այսօր ներկայ գնեցով առիւս է իր
ստանցիայից էնէրգիան, քանի որ մի ուրիշ՝ աւելի իրեն
յարմար գործադրութեան տեղ չունի. իսկ երբ վաղն այդ
ունեցաւ՝ այն ժամանակ իր ստանցիայի ոյժն անմիջապէս
կտեղափոխի մի ուրիշ տեղ և մի բարի օր, ինչպէս քաղա-
քը, նոյնպէս և բնակչութեան մի մասը, որ օգտւում է
էլէքտրակառնութիւնից՝ կմնայ առանց լոյսի և էնէրգիայի:
Այնինչ քաղաքն իր ստանցիայով միանգամայն և ընդ միշտ
կապահովի էլէքտրականութիւն գործադրողներին:

12). Այսօր Կիրակոսեանի լուսաւորութիւնը՝ թէ փողոց-
ների և թէ տների՝ չարժան է և անհաստատ (մէկ տե-
սում ես մութ լոյս, մէկ պարզ, մերթ բարձրանում է,
մերթ ցածրանում, որովհետեւ գործադրում է ստանցիայի
ոյժը աւելի քան թէ պիտի գործադրուէր), այնինչ այդպիսի
բան երբեք չի կարող լինել քաղաքի ստանցիայից և քա-

դարը կարող է երաշխաւորել զրա համար ու մշտապէս կը ստացւի միանգամայն կանօնաւոր և իսկական էլէքտրական լոյս:

13). Այսօր Կիրակոսեանից լոյսի էներգիա ուղղող պիտի վճարէ պրօֆօրի համար համաձայն տարածութեան, ինչպէս և ամեն մի լամպիկներէի համար 7-ական ըուր., այսինքն, եթէ տունը հեռու է գծից 100 կամ աւելի և պակաս սաժէն՝ մի որոշ գումար և, բացի դրանից, տան մէջ օրինակ 10 լամպիկ ունենալու համար՝ 70 ը., այնինչ քաղաքն այս ծախքն էլ պիտի վերցնի իր վրայ՝ միջոց տալով տան աէրերին մացնել իրենց տներում էլէքտրականութիւնը և այդպիսով կարելոյն չափ շատ սպառել իր ստանցիայից արտադրած ոյժը:

Նւ այն և այն և այն:

VI.

Հիմայ մենք մեր առաջարկած ամբողջ ձեռնարկութիւնը բաժանենք երկու մասի.—անհրաժեշտ կարելորի և ոչ այնքան կարելորի:

Առաջին մասը—ջրանցքը, կոյուղին և քաղաքի պարտքը դնենք մի կողմ, իրրև անհրաժեշտ, անյետաձգելի և շուտափոյտ իրականացնելիք պահանջներ, իսկ երկրորդ մասը—տրամվայը, աէլէֆօնը և էլէքտրական ստանցիան միւս կողմ, իրրև յետաձգելի և ոչ այնքան անհրաժեշտ կարելիքներ:

Առաջինը, անհրաժեշտը, պահանջում է ծախք 450,000 ըուր., իսկ մինչև այդ փոխառութիւնը կիրաւորուի՝ քաղաքիս պարտքը կհասնի 150,000 ը., որեմն 500,000 ը. դրամագլուխ, իսկ երկրորդը, ոչ այնքան կարելորը, դիցուք նոյնպէս 500,000 ը.

Առանց տաջինի—ջրանցքի, կոյուղու և պարտքի վճարման քաղաքը եօլայ չի գնայ, իսկ առանց երկրորդի—տրամվայի, աէլէֆօնի և ստանցիայի՝ քաղաքը միշտ կարող է եօլայ գնալ:

Պէտք էր կարծել, որ հէնց այս հանգամանքը դէմ է երկրորդ մասի իրականացման, քանի որ նախ՝ աւելի անհրաժեշտ է իրագործել առաջինը և աւելի հեշտ է ճարել 500,000 ըուր. քան իրագործել երկուսը միասին ու ձեռք բերել միանւագ 1,000,000 ը. և ապա՝ այնքան էլ կենսական կարիք չէ գլխացում երկրորդ մասի համար:

Բայց որպէս զի այդ երկու մասերի կամ կօմբինացիաների արժանիքը ակնյայտնի լինի, փորձենք նոյնպէս մի գուգահեռական գիծ անցկացնել դրանց մէջ և տեսնենք թէ կարելի է առանց երկրորդի առաջինն անվնաս իրագործել և որքան շահուէտ կլինի քաղաքի համար զուարմական և տնտեսական տեսակետից:

Խօսենք նախ՝ առաջին մասի համար.—ջրանցքի, կոյուղու և պարտքի մասին և տեսնենք թէ քաղաքական կինչ ծախք, ինչ եկամուտ կարող է ունենալ և քանի տարուով կարող կլինի ծածկել իր պարտքը:

Եթէ ընդունենք, որ ջրանցքը անխախտ կարող է տալ մինչև 50,000 ը. և կոյուղին՝ 5000 ըուր., դրանց տարեկան ծախքը—ջրանցքի 15,000 ը., կոյուղու—3000 ը. փոխառած դրամագլխի տոկոսը 6-ով՝ 30,000 ը.՝ կտնէ 48,000 ը. տարեկան:

Ուրեմն այս մտօից կարող է մնալ տարեկան միայն 7,000 ըուր. որը 70 տարի ճշգրտեմամբ վճարելով՝ հազիւ թափի 500,000 ը. փոխառած գումարը և այն՝ եթէ ջրանցքը տայ ոչ պակաս քան 50,000 ը. տարեկան:

Դրամական կամ տնտեսական տեսակետից այս կոմբինա-



ցիան անօգտաւէտ պէտք է համարել. բայց քաղաքիս ագ-
գաքնակութեան առողջապահական տեսակետից միանգա-
մայն անհրաժեշտ է օգտաւէտ:

Թէկուզ ողջ քաղաքը ծախել, բայց ջուրն ու կոյուղին
անպատճառ ունենալ:

Ահա թէ որքան անհրաժեշտ են պրանք:

Հիմայ էլ խօսենք երկրորդ բաժանմունքի մասին. այսինքն
— տրամվայի, տէլեֆօնի և էլէքտրական ստանցիայի մա-
սին և տեսնենք թէ որքան կարևոր են սրանք քաղաքի շա-
հերի տեսակետից:

Դարձեալ խօսենք հաւանական թւերով և նոր ձևակեր-
պութեամբ:

Եթէ ընդունենք, որ տրամվայը տարեկան կտայ 40,000
ր. (եթէ գիծն անցնի նաև նորը, Կօնդ, Դամուրբուլաղ և
գերեզմանների մօտով), տէլեֆօնը՝ 25,000 ր. և էլէքտրա-
կան ստանցիան, ինչպէս յիշեցինք (№ 55) 146,000 ր., կա-
նէ միասին ընդհանուր տարեկան մօտը 211,000 ր.:

Սրանց ծախքն է դիցուք՝ տրամվայի 30,000 ր., տէլե-
ֆօնի 10,000 ր., ստանցիայի թէկուզ 25,000 րուր. և փո-
խառած գումարի տոկոսը 6-ով՝ 30,000 րուր. և գումարի
հանգցնելը 20,000-ական րուրի, ընդհանուր ծախք պէտք
է հաշուել 115,000 րուր. տարեկան:

Այս ծախքը գուրս գալով ստացուելիք 211,000 ր. եկա-
մունքից, գուտ արդիւնք կմնայ տարեկան 96,000 ր.:

Բացի այդ ամենից միջանկեալ հաշւենք միմիայն էլէք-
տրական ստանցիայի տարեկան եկամուտը նաև մի ուրիշ
և ոչ պակաս հաւանական կօմբինացիայով:

1). Եթէ ընդունենք ստանցիայի գործը բաղաքն այնպի-
սի պայմանների մէջ զնի, որ կարողանայ բոլոր 3000 ձիու

ոյժն էլ բանեցնի օր ու գիշեր և անասելի, աներեակայելի
աժանութեամբ գործադրի իր ստացած ոյժը, օրինակ, ա-
մէն մի ձիու ոյժը թէկուզ 1¹/₂ կ. ժամը, կամ 36 կ. մի
օր ու գիշերայ մէջ, (որ կիլովատ-ժամի արժէքը հաւասար-
ւում է 2 կոպէկի), կտացել օրեկան 1080 րուր., ամառ-
կան 32,400 ր. և տարեկան 394,200 ր.:

2). Եթէ ընդունենք, որ այդ 3000 ձիու ոյժն ամբողջո-
վին շրանեց, այլ սկզբում պահանջ եղաւ թէկուզ միայն
1500 ձիու ոյժին, այս դէպքումն էլ կտացել տարեկան
մօտ 200,000 ր.:

3). Եթէ, վերջապէս, վաճառի միայն հազար ձիու ոյժը
նոյն այդ հաշուով, այսինքն 2 կոպ. կիլովատ-ժամը, այդ
դէպքումն էլ կտացել տարեկան աւելի քան 130,000 րուր.
մօտը: Իսկ եթէ հաշւենք նոյն կիլովատ-ժամը 4 կոպէկով,
ինչպէս ի նկատի ունենք մեր այս գրածքում, կտացել
260,000 ր.:

Ուրեմն, ինչպէս որ վերցնենք, ինչ հաշիւ որ ընդունենք,
մի քանի տարւայ մէջ ստանցիան կարող է թափել իր
վրայ և տրամվայի ու տէլեֆօնի վրայ դրած ամբողջ
պարտքը և այնուհետև կունենայ տարեկան գուտ արդիւնք
130,000 րուր. (դարձեալ ի նկատի ունենք միայն 1000
ձիու ոյժը): Հէնց սա մի այնպիսի պատկառելի գումար է,
որով կարելի կլինի ծածկել և ջրանցքի, և կոյուղու, և
տրամվայի, և տէլեֆօնի, և ստանցիայի տարեկան ծախքե-
րը, ինչպէս և ամենակարճ ժամանակամիջոցում կհանի
ամբողջ ձեռնարկութեան վրայ գործադրած պարտք գու-
մարը իր լիուրի տոկոսներով և գործի հէնց սկզբից վճա-
րած կլինի քաղաքի 100-130,000 ր. պարտքը, եթէ ձեռ-
նարկութեան միւս մասերը — ջրանցքը, կոյուղին, տրամվայը
և տէլեֆօնը նոյն իսկ ոչ մի կոպէկ մարսուր արդիւնք չը-

տան քաղաքին:

Անկասկած՝ կրկնում ենք՝ անհետաքստութիւն կլինէր կարծել, որ էլէքտրական ստանցիայի ամբողջ էնէրգիան հէնց շինութեան առաջին օրերից պիտի ուղարկէր և այն՝ բոլոր 3000 ձիու ոյժն էլ: (հէնց այդ պատճառով էլ մենք վերցնում ենք 3-րդ կէտը): Բայց անկասկած է նաև, որ չի բաշի մի բանի ապրի և ամբողջ ոյժը կատանայ իր գործադրութիւնը, եթէ միայն, ի հարկէ, բարեխիղճ և հմարագէտ ղեկավարներ ձեռքին լինի գործը, ինչպէս և ժամանութիւնը հասցրած լինի մինիմումի:

Վերջապէս հէնց ինքը, քաղաքը այնպիսի մեծ պահանջ ունի թէ քաղաքիս փողոցները կանոնաւոր լուսաւորելու համար և թէ արամկայների շարժիչ ոյժերի համար, որ հէնց այս երկու պարտական կարող է ծածկել գործի մեծ ծախքը:

Սա գոնէ խիմերա չէ:

Պէտք է այդտեղ աւելացնենք և այն, որ քաղաքի ստանցիան թէև պէտք է շինուի 3000 ձիու ոյժ ստանալու նախագծով, բայց կարող է սկզբում միայն 1000 ձիու ոյժ ստանալու մեքենաներ գնել և հետզհետէ՝ համաձայն նորանոր պահանջների աւելացնել համեմատաբար և մեքենաների՝ բանակն ու ոյժը: Այսպիսով սկզբնական ծախքը մէջ մեծ անտեսութիւն ունաջ կգայ:

VII.

Այս բոլոր հանգամանքներն աչքի առնջ ունենալով, պէտք է հոտատարէն ենթադրել, որ՝ այսպէս թէ այնպէս—

Ջրանցքը կտայ, բացի իր վրայ գործադրած ծախքերից և պարտքի հանգցնելուց՝ անշուշտ մի որոշ պլիւս:

Տրամվայը, եթէ մի մեծ պլիւս էլ չտայ (թէ և անպատ-

ճառ կտայ) գոնէ չի ծանրանայ ընդհանուր ձեռնարկութեան վրայ, բայց՝ միևնույն ժամանակ՝ նա կլինի, ինչպէս ասացինք, բաւականին զգալի նեցուկ էլէքտրական ստանցիայի համար:

ձեռնարկութեան վրայ ծանրացող մասը կլինի միայն կոյուղին և քաղաքի վճարելիք 100-150,000 ռ. պարտքը:

Տէլէֆօնն էլ մենք ի ղէպ աւելացնում ենք ձեռնարկութեան իրը մի կարևոր մասն. նախ՝ դա կլինի շուտափոյթ հաղորդակցութեան և ժամանակակից կուլտուրայի մի անհրաժեշտ գործօն և ապա՝ ընդհանուր գործի մէջ՝ համեմատաբար շատ քիչ ծախք կկլանի. —բայց մեծ կլինի նրա կատարելիք գործը: Սա էլ, եթէ նայն իսկ մի առանձին վստահ չտայ, կծածկի անշուշտ գոնէ իր տարեկան ծախքն ու կարկտանքը:

Պէտք է իմանալ, որ՝ այսօր Թիֆլիզ քաղաքն ունի է կառավարութիւնից գնել տէլէֆօնն ու նրա էկսպլուատացիայի իրաւունքը: Ինչու, ուրեմն, այդ գործը մեր քաղաքն ինքը չսկսի և ստիպւած լինի ապագայում սրանից կամ նրանից յետ գնել տէլէֆօնի իրաւունքը:

Իսկ էլէքտրական ստանցիան, ինչպէս ասեանք, կարող է առլ ժամանակին 100—400,000 ռ. տարեկան ընդհանուր եկամուտ, (եթէ կիրովատ-ժամը 2 կոպ. լինի միայն. իսկ եթէ 4 կոպ. լինի—երկու անգամ օտելի, այն է՝ 200—800,000 ռ.): Սա պաշտպան և նեցուկ կլինի ամբողջ ձեռնարկութեանն իր բոլոր մասերով, մի փառաւոր կոթող քաղաքի համար և բոլոր յարմարութիւնների շուրջում քաղաքիս ողջ բնակչութեան համար:

VIII.

Յիմայ ինքն ըստ ինքեան առաջ է գալիս մի խիտ կարևոր հարց և մեր Դուման պէտք է չառ լուրջ մտածի այս մասին:—

Արդեօք բաւականանալ 500,000 թուրք. փոխառութեամբ, չինեւ միայն չքանցըն ու կոյուղին և վճարել քաղաքին պարտքը ու 70 տարի ճնշել փոխառած պարտքի ուրաւ կանով, թէ վերցնել ամբողջ մէկ միլիօն թուրքի փոխառութիւն և չինեւ մեր անհրաժեշտ ձեռնարկութեան բոլոր մասերը միաժամանակ ու ստանալ տարեկան ընդհանուր ծախքերից յետոյ նաև գուտ արդիւնք յօգուտ քաղաքի:

Եւ մենք խորապէս համոզւած ենք, որ պէտք է դիմել վերջին միջոցին.— դա է փրկութիւնը քաղաքիս:

Եթէ քաղաքն ունենայ, օրինակի համար, միայն չքանցըն՝ պէտք է ունենայ իր հսկող ճարտարապետը, իր պրասենսակը, իր հաշւապահը, իր որոշ քանակութեամբ ծաւայողները, կանտրօլը և այլն.

Եթէ ունեցաւ միայն տրամվայը՝ նոյնպէս.

Եթէ ունեցաւ միայն ալէլէֆօնը՝ նոյնպէս.

Եթէ ունեցաւ միայն ստանցիան՝ նոյնպէս:

Այն ինչ, այդ բոլորը միացնելով՝ հարցը միանգամայն փոխուում է:

Այդ բոլորը դառնում է մի գործ, մի աղմկնիստրացիա, մի գրասենեակ, մի հաշւապահ իր օգնականներով և այլն, և ընդհանուր ծախքը անհամեմատ քանում է:

Այդ ամբողջ ձեռնարկութիւնն, իր բոլոր մասերի միաժամանակ կառուցումով միայն, կարող է քաղաքին ազատել իր համար հրէշաւոր պարտքից և շատ մօտ ապագայում լինել ողջ ձեռնարկութեան լիուլի տէրն ու իրաւասուն:

Վերայիշեալ հանգամանքներն աչքի առաջ ունենալով քաղաքը կարող է փոխառութիւն վերցնել ոչ միայն մէկ միլիօն, այլ նոյն իսկ աւելի էլ, եթէ անհրաժեշտ լինի յիշեալ ձեռնարկութեան լիուլի իրականացնելուն:

Թող չկարծեն մարդիկ, որ քաղաքին այդպիսի գումար-նէր չեն տայ.— ամեն որ կտայ, երբ հարցը իր ժամանա-

կին պարզ գրւած լինի, բաղմակողմանի ուսեմնասիրած լինի և նրանից ստացւած արդիւնքները կարելոյն չափ հաւանական լինեն:

Եւ քաղաքը երբէք չպիտի վախենայ թէկուզ միլիօնների փոխառութիւնից, քանի որ ամբողջ գործը, առանց ամենափոքր կասկածի, օգտաւէտ և շահաւէտ է թէ քաղաքի համար և թէ բնակչութեան համար:

IX.

Մենք կարծում ենք չպէտք է կանգ առնել թէկուզ բնաւոր խոչնդոտների առաջ, դանազան կասկածներով ու հակառակ ենթադրութիւններով խոյս տալ գործից և քաղաքին թողնել իր նահապետական ոչ ցանկալի դրութեան ու խաւարի մէջ. այլ անհրաժեշտ է աւար կաշի գործին, ձգտել դէպի շուտափոյթ իրականացումը և քաղել նրա պտուղները կարելոյն չափ շուտով:

Ապրանքը կծախւի այն ժամանակ, երբ նա գրւած կլինի հրապարակի վրայ: 2ի կարելի պահանջի. որ առաջ ծախւի և ապա բերւի ու դնւի այդ հրապարակի վրայ:

Միանգամայն բաւական է, երբ մի որևէ բանի պահանջն զգացուում է, թէկուզ մի տասներորդական չափով. բաւական է որ այդպիսի օրինակներ ունենք մեր ձեռքի տակ գործով և փորձով. բաւական է, որ մեր յետին կանգնած է գիտութիւնը, հնարագիտութիւնը իրենց բազմատեսակ գործնական առաւելութիւններով. բաւական է, որ ծրուպական կապիտալիստները վստահ են ամեն կողմ իրենց կապիտալներին գործադրութիւն տալու համար:

Փաստերի դէմ վիճել չի կարելի:

Բերենք օրինակներ:

Կիրակոսեանը ոչ որից ապահովութիւն չուղեց իր էլէրարականութեան համար: Նա իր մօտաւոր հաւանական

հաշիւներէ վրայ հիմնեց իր գործը: Նա սպեռեց գլխաւորապէս մեր քաղաքային կլուրի պահանջով, (որ միանւագ կազմում էր 300 լամպիկներ), իսկ մնացածները նրա համար ենթադրելի էին: Երբ նրա ստանցիան շինեց, ինչպէս առաջինը, այն աստիճան աւելացաւ նրա աւած լոյսի պահանջը, որ այսօր նա արդէն էնէրգիա չունի և ինքն է խոյս տալիս պահանջներէջ:

Միւս օրինակ.

Մինչև երկաթուղու կառուցումը Երևանի տրակտի վրայ կային միայն 15 ձեռք փոստային կառքեր և դա բաւական էր Երևանի, Նախիջևանի և Նոյն իսկ ամբողջ Ատրպատականի երթեկներէ համար. այն ինչ երկաթուղու կառուցումով և սրա աւած յարմարութիւններով և աժանութիւնով այն աստիճան աւելացաւ երթեկներէ թիւը, որ այսօր օրեկան երկու-երկու անգամ գնում գալիս են ամբողջ գնացքներ 8-10 վագոններով: Այլոսներէ տեղափոխութիւնը՝ նոյնպէս:

Ո՞վ կկարծէր, որ պրամֆօնն այսպէս կտարածէր քաղաքում և հիմայ մեր տներում կան շատ աւելի քան 200 հատ, որոնց գինը միջին թիւով (75 թուր. ամեն մէկը) հասնում է 15,000 թ.: Այս գումարը դրւած է իբրև անհրաժեշտութիւն, թէ իբրև դարձութիւն:

Եթէ զարճութեան համար այսքան է ծախսուած, ապա որքան կծախսէր անհրաժեշտ պէտքերի համար, նամանակ, երբ այդ անհրաժեշտութիւնը ձեռք է գալիս միւսիմումի հասած գներով:

Այս բոլորիս կարէ մեքեմաները քաղաքում տարածուած են շատ աւելի քան հազար հատ, — որանց արժէքը (եթէ հաշւենք իրար վրայ 50 թ.), կնշանակէ մեր քաղաքացիները այդ մեքեմաների վրայ դրել են ոչ պակաս քան 50,000 թ.

Սրանք այնպիսի մի պարզ ապացոյցներ են, որոնք մի աւելորդ անգամ հաստատում են մեր պնդումները:

Մի ոչ պակաս շօշափելի օրինակ էլ.

Ամեն մի վաճառական իր բազմատեսակ ապրանքները բերել տալիս ոչ թէ նախօրօք ցուցակազրելով թէ ով, ինչ և սրբան կպահանջի այս կամ այն ապրանքից, այլ նա բնութամ է իր տարանքը իր հաւանական ենթադրութեանց վրայ հիմնելով և ի նկատի ունենալով իր շրջապատող հաստարակութեան ճաշակն ու պահանջը: Այդպիսով է նա իր գործն անում:

Եւ, վերջապէս, ոչ պակաս օրինակ է մեզ համար և այն, որ Թիֆլիզի 3 միլիօն փոխառութեան համար տանեակաւոր ֆիրմաներ ու կապիտալիստներ առաջարկում են իրենց գումարները Թիֆլիզին. կամ Բագուի 22 միլիօն փոխառութեան համար՝ ստացւած են արդէն հարիւրաւոր առաջարկութիւններ:

Ինչից ուրեմն պիտի վախենանք մենք. — գործից. — փաստը մեր առաջն է: Կապիտալ չգտնելուց՝ — նոյնպէս օրինակներն ունենք:

Բոլոր շահները մեր կողմն են, հարկաւոր է միայն կամք:

Պարզ է ուրեմն. երբ քաղաքիս ամբողջ ձեռնարկութիւնը կազմ և պատրաստ կլինի և աժանութիւնն ակներև, ապահանջը հետզհետէ կաւելանայ, նորանոր կարիքներ կստեղծւեն, նորանոր գործարարներ ու արհեստանոցներ պուշ կգան, ի նկատի ունենալով նաև շարժիչ ոյժի անսահման աժանութիւնը և գործը կհասնի իր սրնչ, ցանկալի աստիճանին:

Մենք համոզուած ենք, կգայ ժամանակ և շատ չի տևիլ, որ 3000 ձիւ ուժի գորեղութիւնն էլ կպակասի քաղաքային և հազարակական կարիքների առաջ:

X.

Քաղաքն ինքը մի անսպասելի գրառական է միլիոնների հանդեպ:

Յոյց առնելը մեր առատությունում փոքր ի շատե՛ աչքի ընկնող մի քաղաք, որը չունենալ միլիոնների հասած և շատ առևելի պարագրեր:

Չատ ու շատ քաղաքներ, պարտքերի մէջ խրտած՝ դեռ այնուամենայնիւ շարունակում են նորանոր փոխառութիւնների ծրագիրներ կազմել իրենց անհրաժեշտ կարիքները լրացնելու համար:

Իբրի օրինակ, դարձեալ հեռու չգնանք Գավկասից:

Մեզ արդէն յայտնի է Թիֆլիզի 50-60 միլիոն փոխառութեան նոր ծրագիրը:

Մեզ յայտնի է Բագի 28 միլիոնի ծրագիրը:

Մեզ յայտնի է նաև, որ մօտ օրերս էլ Բաթումն է սրուշել 3,400,000 ռուբ. փոխառութիւն անել ջրանցքի, կոյուղու, էլեքտրական և ջրաբուժական կայարանների, նոր շքեղ թատրոնի, թէև նա արդէն ունի իր մեծ, երկաթեայ թատրոնը և այլ մանրմանը շինութիւնների համար...

Միթէ մեր Երևան քաղաքը մի միլիոնի համար պիտի կառնկածի կամ գժտարանայ և այն՝ անհրաժեշտ կարիքների համար: 25 օր այդ միլիոնի մէջն է նաև քաղաքիս վրայ ծանրացած 100-150,000 ռ. պարտքի հոտուցումը, որը քանի գնում, առկանում է տարեկան 12 տոկոս վերագրելով:

Իսկ եթէ կղժարանայ փոխառութեան մէջ, կվտնենայ պարտքից կամ կկռակածի, որ մեր ձեռքը չեն տայ մի միլիոն գումարը, չունենալով գրառ հանդէպ գրառական, — մենք ցոյց կտանք մի սրիշ միջոց, օրով, կարծում ենք, կարող կլինի մեր քաղաքը ամեն ինչ յաջողեցնել:

Ահա այդ միջոցը: — Հրատարակել լուրը յայտնի լրագրներում թէ առաստառների և թէ արտասահմանի՝ մօտա-

ւորապէս մի այսպիսի յայտարարութիւն.

„Երևան քաղաքն, ունենալով իր կողքին կալած՝ գլխի վայր հօսող Ջանգու գետը, օրից կարող է ստացել ամեն մի վերստ տաքածութեան վրայ 5-8 սաժէն ջրվէժ, հնարաւոր է համարում սնննալ մի գիղրավիւր-էլեքտրական (կայտրան) ստանցիտ 3000 ձիու ոյժի գործելութեամբ: Այս ստանցիտն պէտք է մատակարարի քաղաքին և քաղաքին բնակիչներին լոյս, ոյժ, տաքութիւն և դովութիւն:“

„Շնարաւորութիւն ունի կառուցանելու մի ջրանցք, 18 վերստ քաղաքից հեռու „Ղրխբուլաղ“ աղբիւրներից, որը բարձր է քաղաքից մօտ 150 սաժէն և օրից պէտք է բերել ջուր միայն մօտ 250,000 դոյլ օրեկան: Այս ջրանցքը ոչ մի կարելք չի ունենալ ֆիւտրացիայի կամ մի օրեկ անկ Երև. ու դուք մղող մեքենաների:“

„Պիտի քաղաքիս եղած ձիաքարշը փոխել էլեքտրական արամվայի և քաղաքում մի երկու նսր գծեր անցկացնել:“

„Պիտի շինել քաղաքիս մէջ աէլէֆօն:“

„Պիտի, վերջապէս, շինել քաղաքիս թէր չորս փուլահեռական փողոցներով կոյուղի՝ մօտ 7 վերստ տարածութեամբ և միայն մէկ արշին տրամագծով. իսկ սրանց հետևող գլխաւոր մագիստրալը — մօտ 3 վերստ և երկու արշին տրամագծով միայն:“

„Բացի այս ամենից՝ պիտի վճարել քաղաքին 100-150,000 ռ. պարտքը կառավարութեանը:“

„Այս բոլորի մօտաւոր արժէքը հասնում է մինչև մի միլիոն ռուբլու:“

„Յիշեալ ամբողջ ձեռնարկութիւնն իր բոլոր մասերով իրականացնելու համար՝ քաղաքը հրաւիրում է կապիտալիստներ կամ այնպիսի ֆիրմաներ, որոնք յանձն կառնեն տու առկառն կազմել անհրաժեշտ պրօէկտները, կառուցանել իրենց փողով և ջանքով այս ամենը և յանձնել քա-

ղաքիս բոլորովին կաղմ և պատրաստ։

«Իրենց աշխատութեանց վարձը, իրենց կապիտալը, փա-
ստական թղթերի վրայ հիմնած, քաղաքը կվերցնի իր
վրայ և որոշած գումարը պարտք կմնայ այդպիսի ֆիրմա-
յին կամ կապիտալիստին 5 տոկոսով՝ նոյն այդ ամբողջ ձեռ-
նարկութիւնը գրաւ գնելով նրանց մօտ։

«Քաղաքը ոչինչ չի ունենալ եթէ նոյն այդ ֆիրման իր
վրայ կվերցնի այնուհետև ամբողջ ձեռնարկութեան էկսպրո-
ստացիան՝ նախօրօք որոշած պայմաններով։

Ահա մօտաւորապէս այսպիսի մի յայտարարութիւնը կտ-
րող էր շատ ձեռնարկուներ առաջ քաշել և մեր քաղաքը
կայսրմանաւորէր այն ֆիրմայի կամ կապիտալիստի հետ,
որի թէ վստահւիլովիւնը և թէ անաշարկութիւնը ու
պայմանները ամենաձեռնառուն կլինէին քաղաքի համար։

Այս յայտարարութիւններից յետոյ, կարող էին առաջ գալ
այնպիսի նոր կօմբինացիաներ, որոնց իրագործումը կարող
էր ոչ պակաս օգտաւէտ լինել քաղաքի համար։

Եւ մեր քաղաքն առանց մի կողմէկի, առանց գլխացուի
կիրականացնէր մի այնպիսի գործ և տէր կլինէր մի այն-
պիսի ձեռնարկութեան, որը պատիւ կբերէր ամբողջ ու-
սաստանի ամեն մի քաղաքի համար և կտար քաղաքի
բնակչութեան ամեն անասկ առաւելութիւններ, յարմարու-
թիւններ ամենաաժան, մինիմումի հասած գներով։ Այսպի-
սով մեր քաղաքը կկանգնէր մի որոշ կուլտուրական հողի
վրայ ու ամբողջ լուսաւորեալ աշխարհի նախանձը կշարժէր։

Քաղաքիս հայեր, մի փոքր մտածեցէք այս հարցի վրայ։
Յամենայն դէպս ոչինչ չէք կորցնի։

Ձեր կարցրածը պիտի լինի երկու կամ երեք հարիւր
բուրլի միայն՝ յիշածս յայտարարութիւնների համար։

Փորձեցէք։

Վ. Ե. Չ։

ՀՀ Ազգային գրադարան



NL0203686

25.500